Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թ.
մարտի 27 -ի N 237 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխա-նատուները	Կատարման ժամկետը
1	2	3	4	5
1.	«ՀՀ էներգետիկայի և բնա-կան պաշարների նախարարության վարչական վիճա-կագրական հաշվետվու-թյունների ձևերը և հավա-քագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վիճակագրական ռեգիստրների վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	1) վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման իրավական դաշտի ապահովում՝ առաջնորդվելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվա-կանի մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» N 109 որոշմամբ. 2) հաշվետվությունների ձևերի մշակման և ներդրման ժամա-նակացույցի հաստատում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ համա-ձայնեցված	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
2.	«ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար ապրանքների պահանջարկի ձևավորման և ապրանքների՝ պահես-	1) գործընթացի իրակա-նացման ընթացակարգի հաստատում՝ սահմանելով՝ ա. պատասխանատուներին, ժամկետները, պահանջագրերի օրինակելի ձևերը, բ. ստորաբաժանումների համար տարվա կտրվածքով	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ

1	2	3	4	5
	տից բացթողման կարգը, ինչպես նաև ստորաբաժանումների չափաքանակները հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	հատկացվելիք առարկաների չափաքանակները, դրանց հաշվարկման կարգը, գ. պահեստում առարկան չլինելու դեպքում գնումների ընթացակարգով այն ձեռք բերելու հիմքերը, ժամկետները և այլն. 2) սահմանել, որ, աշխատակազմի պահպանման կարիքների համար գնումների պլանը կազմելիս, կիրառվում են ստորաբաժանումների համար սահմանված չափաքանակները, ինչպես նաև ստացվում են ստորաբաժանումների առաջարկությունները պահանջարկի վերաբերյալ		
3.	«ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մոնիթորինգ իրականացնելու և դրանց արձագանքելու կարգը հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին տարբեր ձևերով արձագանքելու ընթացակարգի և մասնակիցների, ժամկետների սահմանում կողմնորոշվելով գործընթացի գծապատկերային նկարագրությամբ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ
4.	«Մամուլի ասուլիսի կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	մամուլի ասուլիսի գործընթացի կանոնակարգում՝ սահմանելով գործընթացի քայլերը, ժամկետները և պատասխանատուներին	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ
5.	«ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմում համակարգչային տեխնիկայի սպասարկման	համակարգչային տեխնիկայի սպասարկման գործընթացի կանոնակարգում և գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների ու	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ

1	2	3	4	5
	կարգը հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	պատասխանատուների սահմանում		
6.	«ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու շահագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանի ընդունում	նախարարությանը տրամադրված ծառայողական ավտոմեքենաների բաշխման, շահագործման, ընթացիկ նորոգման ու պահպանման հարցերի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2013 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ